

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-12-1-Ա

ք. Երևան

19.12.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի դեկտեմբերի 19-ի նիստում քննարկեց 2022 թվականի դեկտեմբերի 7-ին լիազորված անձ Միլենա Խորոտյանի կողմից ներկայացված Unipharm, Inc. ընկերության (350 Fifth Avenue, Suite 6701 New York NY 10118, US) «LACTOBALANCE KIDS» (IR1583376) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

Միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված՝ 3-րդ, 5-րդ, 10-րդ և 32-րդ դասերի մնացած ապրանքների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում «KIDS» (հայերեն թարգմանությունն է՝ երեխաներ) բառը պարունակող հայտարկված ապրանքային նշանը չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան հայտում նշված մնացած ապրանքների համար, քանի որ սպառողին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի վերաբերյալ հարցում:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին մասնակի իրավական պահպանություն տալու մասին, քանի որ ապրանքների և ծառայությունների ցանկում կան ապրանքներ, որոնց համար կարելի է գրանցել ներկայացված ապրանքային նշանը և այն մոլորության մեջ չի գցի սպառողին ապրանքների բնույթի վերաբերյալ հարցում:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ և նշեց, որ 5-րդ դասի համար փոփոխություններ են ներկայացված Միջազգային բյուրո:

Փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Միլենա Խորոսյանի կողմից ներկայացված Unipharm, Inc. ընկերության «LACTOBALANCE KIDS» (IR1583376) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին մասնակի իրավական պահպանություն տալ հետևյալ ապրանքների համար՝ դաս 03. ոչ բուժական կոսմետիկա և արդուզարդի պատրաստուկներ; ոչ բուժական ատամնափոշիներ; օժանելիք, եթերայուղեր; սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. լվացող, փայլեցնող, մաքրող և հղկող պատրաստուկներ.

դաս 05. հակաբորբոքային միջոցներ; կենսաբանական պատրաստուկներ բժշկական նպատակների համար. քիմիական պատրաստուկներ բժշկական նպատակների համար; քիմիական պատրաստուկներ դեղագործական նպատակների համար; քիմիական-դեղագործական պատրաստուկներ; մաստակ բժշկական նպատակների համար; դիետիկ սննդամթերք բժշկական նպատակներին հարմարեցված; դիետիկ նյութեր բժշկական նպատակներին հարմարեցված; դեղեր բժշկական նպատակների համար; էլիքսիրներ (դեղագործական պատրաստուկներ); սննդային հավելումներ ֆերմենտներից; ֆերմենտային պատրաստուկներ բժշկական նպատակների համար; ֆերմենտներ բժշկական նպատակների համար; ջերմիջեցնող միջոցներ; բժշկական նպատակներին հարմարեցրած սառեցումով չորացրած սնունդ; ռետին բժշկական նպատակների համար; ունաբ դեղորայքային; լուծողականներ; բուժական քաղցրավենիք/ բուժական կոնֆետներ; դեղամիջոցներ փորկապությունը թեթևացնելու համար; դեղամիջոցներ մարդկանց համար; սննդային հավելումներ; սննդարար

նյութեր միկրոօրգանիզմների համար; պաստեղներ դեղագործական նպատակների համար; դեղագործական պատրաստուկներ; դեղագործական ապրանքներ; բույսերի մզվածքներ դեղագործական նպատակների համար; վիտամինային պատրաստուկներ; խմորիչ դեղագործական նպատակների համար.

դաս 10. վիրաբուժական, բժշկական, ատամնաբուժական ապարատներ և գործիքներ; արհեստական վերջույթներ, աչքեր և ատամներ; ոսկրաբուժական իրեր; կարեր դնելու նյութեր; հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված թերապևտիկ և օժանդակ սարքեր. մերսման ապարատներ; ապարատներ, սարքեր և պարագաներ նորածիններին կերակրելու համար.

դաս 32. ոչ ալկոհոլային խմիչքներ; հանքային և գազավորված ջրեր; մրգային խմիչքներ և մրգային հյութեր; օշարակներ և այլ ոչ ալկոհոլային պատրաստուկներ ըմպելիքներ պատրաստելու համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ